Կարգապահական գործ թիվ ԿԳ-25083

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԹԵՀՄԻՆԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Թեհմինե Հովսեփյանի, դիմող Էրիկ Ավանեսյանի և վերջինիս ներկայացուցիչ Լուսինե Սարգսյանի,

քննության առնելով փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանին (արտոնագիր՝ թիվ 1214), **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Էրիկ Ավանեսյանը **(այսուհետև նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանի հետ 15.09.2022թ. կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով Փաստաբանը ստանձնել է նրա իրավունքների պաշտպանությունը: Պայմանագրի գինը կազմել է 400.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը բանավոր հայտնել է, որ խնդիրը լուծման է ենթակա վարչական դատավարության կարգով, սակայն նա դիմել է քաղաքացիական դատարան, որը մերժել է դիմումի վարույթ ընդունելը, որի դեմ Փաստաբանը վերաքննիչ բողոք չի ներկայացրել, մինչդեռ՝ պայմանագրով ուներ նման պարտավորություն: Դիմողը նշել է նաև, որ այլ տեսակի հայցադիմում է անհրաժեշտ եղել ներկայացնել դատարան, սակայն Փաստաբանը սխալվել է և հրաժարվել է նաև վերադարձնել Դիմողի կողմից վճարված գումարը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դիմողը խնդրել է փաստաբան Թեհմինե Հովսեփյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Թիվ ԿԳ-25083-3-Ա
14.01.2026թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը ապացույցներ չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ Էրիկ Ավանեսյանի և Թեհմինե Հովսեփյանի միջև կնքվել է մեկ պայմանագիր, որում ի սկզբանե նշվել է, որ Փաստաբանը վարչական դատարան է դիմելու, որից հետո դիմել է քաղաքացիական դատարան և գործին մոտեցել է անբարեխղճորեն:

Հանձնաժողովի նախագահի հարցին ի պատասխան՝ նշել է, որ երբևէ չեն ծանոթացել Փաստաբանի կողմից կազմված փաստաթղթերին և չեն հանդիպել Փաստաբանին: Իրենք Արցախում են եղել և իրենց հետ որևէ մարտավարություն չի քննարկվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Էրիկ Ավանեսյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

17.09.2025թ. և 30.09.2025թ. բացատրություններով Փաստաբանը նշել է, որ իր աշխատանքը կատարել է օրենքով սահմանված կարգով, թիվ ԵԴ/57508/02/22 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոք չի ներկայացրել, քանի որ Էրիկ Ավանեսյանը չի ցանկացել: Թիվ ԵԴ2/10038/02/24 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք չի ներկայացրել, քանի որ Ավանեսյանը կնոջ պահանջով գործն իր մոտից ամբողջությամբ վերցրել է: Ինքը նույնիսկ առաջարկել է, որ գրի վճռաբեկ բողոք, սակայն Ավանեսյանի կինը՝ Լուսինեն իր ներկայությամբ ստիպել է ամուսնուն գործը վերցնել իր մոտից:

Փաստաբանը նաև նշել է, որ վճարված գումարը չի պատրաստվում վերադարձնել, քանի որ դրա դիմաց աշխատանք է կատարել: Եղել է դեպք նույնիսկ, որ հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի գումար չի ունեցել Դիմողը և փաստաբանն ինքն է դրա համար վճարել, որպեսզի պատշաճ ժամկետներում փաստաթղթերը կազմվեն և ներկայացվեն դատարանին:

Ամբողջացնելով բացատրությունը, Փաստաբանը հավելել է, որ դիմումի բովանդակությունն իր համար ամբողջությամբ անընդունելի է:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որին ի պատասխան նա կրկին հայտնել է վերը նշվածը՝ հավելելով, որ Դիմողի նպատակն իրենից գումարը հետ ստանալն է, ինչը Պալատի իրավասությունից դուրս է:

Հանձնաժողովի նիստին ներկայանալով՝ Փաստաբանը հայտնել է, որ իր համար անհասկանալի է դիմումի բովանդակությունը քանի որ դրանում փաստերը խեղաթյուրված են: Իրականությունն ըստ Փաստաբանի հետևյալն է՝ Էրիկ Ավանեսյանը դիմել է իրեն,

որպեսզի 2018թ. կնքած առուվաճառքի պայմանագրի հիմքով վերականգնվի իր սեփականության իրավունքը: Կադաստրի կոմիտեից մերժում է ստացել այն հիմքով, որ մեղմացնող հանգամանքներ առկա չեն և ՍԴ դատարանի որոշման հիմքով իրավունքի գրանցում չի կարող կատարվել: Ուսումնասիրելով դատական պրակտիկան, հանգել է հետևության, որ վարչական դատարանը մերժում է նմանատիպ բոլոր հայցերը, և Դիմողի և նրա կնոջ հետ եկել են համաձայնության, որ անհրաժեշտ է դիմել քաղաքացիական դատարան՝ գործարքը վավեր ճանաչելու և Էրիկ Ավանեսյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով, ինչը արել է՝ իր պնդմամբ Դիմողի հետ համապատասխան պայմանագիր կնքելուց հետո, որն իր մոտ չի պահպանվել:

Թիվ ԵԴ2/10038/02/24 քաղաքացիական գործով իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջը դատարանի կողմից վարույթ չի ընդունվել, ինչի դեմ ինքը սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք է բերել, ինչի մասին Դիմողը չի էլ իմացել: Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ նշված պահանջը պետք է քննվեր ոչ թե հատուկ, այլ հայցային վարույթով: Դիմողը և կինը հրաժարվել են վճռաբեկ բողոք ներկայացնելուց:

Հանձնաժողովի հարցերին ի պատասխան՝ Փաստաբանը նշել է, որ պայմանագրերի իր օրինակները չի պահպանել իր մոտ, այլ դատարան է ներկայացրել, իսկ ինչ վերաբերում է վերաքննիչ բողոք չներկայացնելուն, ապա Դիմողի հրաժարումը եղել է բանավոր:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 25.08.2025 թվականի թիվ 262-Ա/ԿԳ-25083 որոշմամբ փաստաբան Թեհմինե Հովսեփյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.7.1 և 3.5.5 և ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

29.08.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Շուշան Հարությունյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 29.10.2025թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 29.10.2025թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 26.11.2025թ. ժամը 19:30-ին, 03.12.2025թ. ժամը 18:30-ին, 14.01.2026թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով

նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Թեհմինե Հովսեփյանը ստանձնել է Էրիկ Ավանեսյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Թեհմինե Հովսեփյան ԱՁ-ի և Էրիկ Ավանեսյանի միջև 15.09.2022թ. և 25.11.2022թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի պատճեներով:*

2. Էրիկ Յուրայի Ավանեսյանի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան **(այսուհետ նաև՝ Դատարան**) ընդդեմ պատասխանող Ծաղիկ Հակոբի Բաբուջյանի՝ խնդրելով վավեր ճանաչել Ծաղիկ Հակոբի Բաբուջյանի և Էրիկ Յուրայի Ավանեսյանի միջև 14.02.2018 թվականին կնքված, Մալաթիա նոտարական տարածքի նոտար Աննա Թովմասյանի կողմից վավերացված, գրանցամատյանում 0413 համարի ներքո գրանցված՝ անշարժ գույքի (բնակարանի) տարաժամկետ վճարումով առքուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք ճանաչել Էրիկ Յուրայի Ավանեսյանի սեփականության իրավունքը՝ քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փողոց, 8 շենք, թիվ 30 բնակարանի նկատմամբ: *Սույն փաստը հաստատվում է հայցադիմումի պատճեով:*

3. 07.11.2022թ. Փաստաբանի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հասցեագրված հայցադիմումը ստացել է ԵԴ/57508/02/22 համարը, ընդունվել է վարույթ և նշանակվել է դատական նիստի օր: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, հայցադիմումով և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. 10.12.2024թ.Դատարանը որոշել է թիվ ԵԴ/57508/02/22 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Էրիկ Յուրայի Ավանեսյանի ընդդեմ Ծաղիկ Հակոբի Բաբուջյանի՝ գործարքը վավեր ճանաչելու և որպես հետևանք սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին՝ կիրառել արագացված դատաքննություն: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. 10.01.2025թ.Դատարանը վճռել է Դիմողի հայցը մերժել, որում նշել է հետևյալը. *«Տվյալ դեպքում Դատարանը, արձանագրելով, որ ձևակերպված՝ գործարքը վավեր ճանաչելու և գործարքի վավերության հետևանք կիրառելու հայցապահանջը ներկայացված* ***փաստակազմով ակնհայտ անհիմն է՝*** *դրա հիմքում դրված փաստերի համատեքստում, գտնում է, որ հայցն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման:»: Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

6. 25.11.2024թ. Փաստաբանի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է հասցեագրել դիմում՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, որը ստացել է ԵԴ2/10038/02/24 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

7. 06.12.2024թ. Դատարանը վերադարձնել է Դիմողի դիմումը, որում նշել է հետևյալը. *«Տվյալ դեպքում դիմողը պահանջել է հաստատել հետևյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը. «Էրիկ Յուրայի Ավանեսյանի և Ծաղիկ Հակոբի Բաբուջանյանի միջև 14.02.2018 թվականին կնքված, Մալաթիա նոտարական տարածքի նոտար Աննա Թովմասյանի կողմից վավերացված, գրանցամատյանում 0413-ով գրանցված, անշարժ*

գույքի (բնակարանի) փարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագրի հիմքով Երևան քաղաքի, Անդրանիկի փողոց 8 շենքի թիվ 30 բնակարանի նկատմամբ ճանաչել Էրիկ Յուրայի Ավանեսյանի սեփականության իրավունքը»: Մինչդեռ նման փաստ նախատեսված չէ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ որևէ օրենքով, որպիսի պայմաններում Դատարանը չի կարող այդպիսի պահանջով ներկայացված դիմումն ընդունել վարույթ:»: Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:

8. 06.12.2024թ. «Դիմումը վերադարձնելու մասին» Դատարանի որոշումը Էրիկ Յուրայի Ավանեսյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: 17.04.2025թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշել է Դիմողի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժել: 17.04.2025թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Թեհմինե Հովսեփյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011 թվականից, և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում Փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Թեհմինե Հովսեփյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Թեհմինե Հովսեփյանին վերագրում է բարձր մասնագիտական պատրաստվածություն չցուցաբերելու և բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծ:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք Փաստաբանն ունեցել է բարձր մասնագիտական պատրաստվածություն և տիրապետել է գործող օրենսդրության պահանջներին:***

• արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել վստահորդին:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ)), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության

իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է** (կետ 3.1.2.):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 3.5.5 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ

գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Հանձնաժողովը, գնահատելով կարգապահական գործում առկա ապացույցները, կողմերի բացատրությունները, դրանց փոխադարձ համադրությամբ հաստատված փաստական հանգամանքները, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի իրավական գնահատման համար նշանակություն ունեցող բոլոր տվյալները, գալիս է այն եզրահանգման, որ սույն գործով Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ: Սույն եզրահանգման հիմքում դրված է այն, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, չի ցուցաբերել տվյալ գործի բնույթին և նպատակին համարժեք մասնագիտական պատրաստվածություն և, դրա հետևանքով, վստահորդին չի ցուցաբերել այնպիսի իրավաբանական օգնություն, որը կհամապատասխաներ վերը նշված չափանիշներին:

Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ փաստաբան Թեհմինե Հովսեփյանը ստանձնել է Էրիկ Ավանեսյանի շահերի պաշտպանությունը՝ 15.09.2022թ. և 25.11.2022թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա: Այսինքն՝ Փաստաբանի և Դիմողի միջև առկա է եղել փաստաբանական ծառայությունների մատուցման իրավահարաբերություն, որի շրջանակներում Փաստաբանը պարտավոր էր իր մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնել վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը: Միաժամանակ գործի նյութերից հետևում է, որ հենց այդ իրավահարաբերության իրականացման ընթացքում են ձևավորվել այնպիսի փաստեր, որոնք վկայում են ոչ պատշաճ իրավաբանական օգնության մասին:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ սույն գործով հաստատված փաստական տվյալները վկայում են, որ Փաստաբանը, ստանձնելով վստահորդի շահերի պաշտպանությունը, չի իրականացրել գործի այնպիսի նախնական և շարունակական իրավական վերլուծություն, որը թույլ կտար ընտրել վստահորդի իրավունքի պաշտպանության պատշաճ, իրավաչափ և արդյունավետ միջոցը: Մասնավորապես, գործում հաստատված է, որ 07.11.2022թ. Փաստաբանի կողմից դատարան ներկայացված հայցադիմումը, որով պահանջվել է վավեր ճանաչել 14.02.2018թ. կնքված առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք ճանաչել Դիմողի սեփականության իրավունքը, հետագայում դատարանի կողմից գնահատվել է որպես ակնհայտ անհիմն: 10.01.2025թ. դատարանը հայցը մերժել է՝ ուղղակիորեն արձանագրելով, որ ձևակերպված հայցապահանջը ներկայացված փաստակազմով ակնհայտ անհիմն է: Այս հանգամանքը Հանձնաժողովի համոզմամբ ունի էական նշանակություն, քանի որ այն վկայում է ոչ թե պարզապես դատավարական անբարենպաստ արդյունքի, այլ նախապես ընտրված իրավական միջոցի անհամապատասխանության մասին:

Բացի այդ, հաստատված է նաև, որ 25.11.2024թ. Փաստաբանը նույն իրավահարաբերությունից բխող հարցի շրջանակներում դատարան է ներկայացրել իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով դիմում, որը 06.12.2024թ. վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ պահանջվող փաստը նախատեսված չէ ոչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասով, ոչ էլ որևէ այլ օրենքով, հետևաբար՝ նման պահանջով դիմումը չէր կարող ընդունվել վարույթ: Դատարանը փաստացի արձանագրել է, որ ընտրված դատավարական միջոցն ինքնին օրենքով նախատեսված չէ: Հետագայում վերաքննիչ դատարանը ևս մերժել է այդ դատական ակտի դեմ բերված բողոքը՝ ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի մոտեցումը: Հանձնաժողովը գտնում է, որ երկու տարբեր դատավարական ուղիներով նույն վստահորդի իրավունքի պաշտպանության փորձերի արդյունքում արձանագրված նման դատական գնահատականները՝ մեկ դեպքում **«ակնհայտ անհիմն»,** մյուս դեպքում՝ **«օրենքով չնախատեսված պահանջ»,** արդեն իսկ բավարար են եզրակացնելու, որ Փաստաբանը չի դրսևորել տվյալ գործի համար անհրաժեշտ բարձր մասնագիտական պատրաստվածություն:

Հանձնաժողովը կարևորում է նաև այն, որ Կանոնագրքի 2.7.1 ենթակետով սահմանված բարձր մասնագիտական պատրաստվածության պահանջը միայն տեսական գիտելիքի կամ ընդհանրական փորձի պահանջ չէ: Այն ենթադրում է, որ փաստաբանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է կարողանա ճիշտ նույնականացնել իրավահարաբերության բնույթը, տարբերակել նյութական և դատավարական պաշտպանության հնարավոր միջոցները, գնահատել ընտրվող քայլերի իրավական հետևանքները, ինչպես նաև կանխատեսել դրանց արդյունավետությունը: Սույն գործով, սակայն, Փաստաբանի կողմից կիրառված իրավական միջոցների հաջորդականությունը հակառակը ցույց է տալիս. նախ ընտրվել է այնպիսի հայցապահանջ, որը դատարանի կողմից գնահատվել է որպես ակնհայտ անհիմն, ապա ընտրվել է այնպիսի հատուկ վարույթի միջոց, որը դատարանը համարել է օրենքով չնախատեսված: Այս համատեքստում Հանձնաժողովը փաստում է, որ գործով դրսևորված մասնագիտական մոտեցումը չի բավարարել Կանոնագրքի 2.7.1 ենթակետի պահանջներին:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում Կանոնագրքի 2.7.1 ենթակետի խախտումը իր բնույթով և բովանդակությամբ հանգեցրել է նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման: Այս եզրահանգումը բխում է այն տրամաբանական և իրավական կապից, որ վստահորդին ողջամիտ, բարեխիղճ և որակավորված իրավաբանական օգնություն հնարավոր է ցուցաբերել միայն այն դեպքում, երբ փաստաբանը նախ դրսևորում է պատշաճ մասնագիտական պատրաստվածություն: Այլ կերպ ասած՝ եթե փաստաբանը բավարար չափով չի ուսումնասիրում նյութերը, չի նույնականացնում ճիշտ իրավական խնդիրը, չի ընտրում պատշաճ դատավարական միջոցը և չի գնահատում դրա իրավաչափությունը, ապա նա արդեն իսկ չի կարող վստահորդին ցուցաբերել է որակավորված և բարեխիղճ իրավաբանական օգնություն: Հետևաբար, տվյալ գործով բարձր մասնագիտական պատրաստվածություն չունենալը իր անմիջական արտահայտությունն է ստացել նաև վստահորդին ոչ պատշաճ իրավաբանական ծառայություն մատուցելու մեջ:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն, որ Փաստաբանը բացատրություններում նշել է, թե ինքը կատարել է աշխատանք, անգամ որոշ դեպքերում ինքն է վճարել պետական

տուրքը, ինչպես նաև պնդել է, որ գործով որոշակի քայլեր ձեռնարկվել են: Սակայն կարգապահական պատասխանատվության հարցը լուծելիս Հանձնաժողովը գնահատում է ոչ միայն այն, թե արդյոք որևէ գործողություն ընդհանրապես կատարվել է, այլ այն, թե կատարված գործողությունները որքանով են համապատասխանել մասնագիտական պատշաճության, իրավական հիմնավորվածության և վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանության պահանջներին: Միայն գործողություն կատարելու փաստը դեռևս բավարար չէ այն եզրակացության համար, որ իրավաբանական օգնությունն իրականացվել է պատշաճ կերպով: Այս համատեքստում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Դիմողի ներկայացուցիչը չլինելով իրավաբան, խնդիրը կարողացել է լուծել արտադատական կարգով, ինչը լրացուցիչ վկայում է, որ Փաստաբանը չի ընտրել վստահորդի շահերի պաշտպանության արդյունավետ միջոց:

Հանձնաժողովը հատուկ ընդգծում է նաև, որ 2022 թվականից սկսած փաստաբանի կողմից ստանձնված հանձնարարության կատարման ամբողջ ընթացքում գործի նյութերով չի հաստատվում վստահորդի շահերին ծառայող որևէ այնպիսի օգտակար գործողություն, որը հնարավոր լիներ գնահատել որպես պատշաճ մասնագիտական պաշտպանության դրսևորում: Ընդհակառակը, գործով արձանագրված է դատավարական այնպիսի քայլերի հաջորդականություն, որոնք կամ հանգեցրել են ակնհայտ անհիմն գնահատված հայցի մերժման, կամ օրենքով չնախատեսված պահանջով դիմումի վերադարձի: Հանձնաժողովի գնահատմամբ՝ երբ մի քանի տարվա ընթացքում փաստաբանի գործունեությունը չի հանգեցնում ոչ միայն ցանկալի, այլև առնվազն իրավաչափ և արդյունավետ ընթացքի, այդ հանգամանքն ինքնին դառնում է լրացուցիչ ցուցիչ այն բանի, որ փաստաբանական օգնությունը չի ցուցաբերվել պահանջվող մասնագիտական պատրաստվածության համապատասխան:

Այսպիսով, Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանը ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, չի դրսևորել Կանոնագրքի 2.7.1 ենթակետով պահանջվող բարձր մասնագիտական պատրաստվածություն, ինչը հանգեցրել է նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման: Հետևաբար, Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 2.7.1 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանի (արտոնագիր՝ թիվ 1214) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25083-3-Ա
14 հունվարի 2026թ.
ք.Երևան